№ 30 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 9 — 1902 — ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 9 № 30

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Մարթա Սարգսեան Բանաթրեան, Հռիփսիմէ Խանդամիրեան, Աւետիս Բանաթրեան յայտնում են իրանց ծանօթներին եւ բարեկամներին՝ առաջինի սիրելի եղբայր, երկրորդի թանկագին քեռի, իսկ երրորդի աներորդի

ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, ուրբաթ, փետրվարի 8-ին։ Յուղարկաւորութիւնը կը լինի կիրակի, փետրվարի 10-ին, առաւօտեան ժամի 10-ին, Ծղնէթակայ փողոցի վրա գտնվող № 16 տանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը—Խօջիվանքի գերեզմանատանը։ Ամբիծքը—այսօր, փետրվարի 9-ին, երեկոյեան ժամի 6-ին։ 1—2

Փեփրոնեայ, Աչիէն եւ Ռուբէն Իւզբաչեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին եւ ծանօթներին՝ առաջինը իր թանկագին եւ անմոռանալի ամուսնու, երկրորդը եւ երրորդը իրանց ամենասիրելի հօր՝

ՍՏԵՓԱՆ ՏԷՐ-ԱՌԱՔԵԼԵԱՆ ԻՒԶԲԱՇԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում ամսիս 8-ին, ժամի 4-ին ճաշից յետոյ, իր բնակարանում, Լաբորատորնայա փողոց, տուն Ղորղանեանի № 12։
Ամբիծքի եւ թաղման հանդէսի համար առանձին կը յայտարարվի։

Անանա Մարտիրոսեան Բէրինեան եւ Գրիգոր Արտեմովիչ Մարկուզով, խորին վշտով յայտնելով առաջինը իր հարազատ եղբօր, իսկ երկրորդը իր մօրեղբօր որդու՝

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԲԷՐԻՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 4-ին, երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ՝ խնդրում են ազգականներին եւ ծանօթներին չնորհ բերել յուղարկաւորութեանը, կիրակի օրը, փետրվարի 10-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից, որ գտնվում է Շելկովնիկովսկայա (նախկին Բօլշայա-Կրիվայա) փողոցի վրա, № 12, դէպի Նորաշէն եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ Ամբիծքը—շաբաթ, երեկոյեան 6 ժամին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնութեան գործը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Ժողովրդական մի ամսագիր. Նամակ Շուշուց. Նամակ Նորնախիջեւանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական դէպքերը. Նամակ Բոլգարիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շամախու կործանումը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՄԱԽՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

(Նամակ Շամախուց)

Փետրվարի 3-ին

Յունվարի 31-ին տեղի ունեցած սարսափելի երկրաշարժը իր մեծ աղետով գերազանցեց այստեղ պատահած անցեալ բոլոր երկրաշարժներից։ Ցիշեալ թւին ցերեկը, 12½ ժամին, ստորերկրեայ ահեղ եւ բօպէներ տեւող ահարկու ցնցումը մի քանի բօպէի մէջ, բառիս բուն նշանակութեամբ, աւերեց եւ գետնի հետ հաւասարեցրեց ամբողջ քաղաքը, թողնելով փլատակների տակ հազարաւոր զոհեր։

Դժուարանում եմ նկարագրել եւ ցոյց տալ ընթերցողին տեղի ունեցած սոսկալի իրականութեան գոնէ մի փոքրիկ նմուշը։ Անչնչացուցութեամբ, մօտ 5000 տան միաժամանակ փլման ճարճատումը եւ ստորերկրեայ վիթխարի դղրդիւնը ներկայացնում էին մի այնպիսի զարհուրելի որոտ, որ կարող է առաջանալ երկու մոլորակների ընդհարումից միայն։ Քաղաքին եւ շրջակայքին պատած ամպանման փոշու միջից բարձրացած տասնեակ հազարաւոր թշուառների վայնասունը, ջարդ ու փշուր դարձած վիրաւորների սիրտ կտրատող մորմոքը, անասունների բառանչիւնը եւ ջների ոռնոցը միախառնվելով, ներկայացնում էին մի տիտանական ալեկոծման մարմնացումն։ Խառնիճաղանճ սարսափահար բազմութիւնը, էլեքտրականութեամբ ցնցվածի պէս, չտապում էր գլխակորոյս՝ հանել եւ տեսնել իր հարազատների վիճակը։ Որը տեսնում էր իր ամբողջ ընտանիքը կորած, որը գտնում էր նրա մի քանի անդամներին եւ որն էլ բոլորին հրաչքով փրկված։ Դրանց լաց ու աղաղակը, տրտմութեան եւ ուրախութեան բացականչութիւնները,—փառաբանութեան եւ խուլ տրտունջի մի սրտաշարժ տարօրինակութիւն էր, որ հանում էր մինչեւ երկինք։ Ամեն անցուորի փողոցներում աղերսում էին, որ չտապեն օգնել իրանց, որ գուցէ կարողանան կենդանի թաղվածներին ազատել։

Ամբողջովին աւերակների կոյտ ներկայացնող քաղաքին պատեց գիշերվայ խաւարը։

Արդէն ցերեկվանից քաղցած, բացօդեայ, առանց ճրագի ու կրակի ողորմելի բազմութիւնը չը գիտէր ուր գնար, ինչ ճար անէր իր գլխին։

Երկրաշարժը գրեթէ առանց դադարելու հարուածներ էր, որ մէկը միւսից յետոյ տալիս էր, թէեւ ոչ առաջինի պէս սաստիկ։

Տներում, խանութներում գտնված կրակներից բազմաթիւ կէտերի վրա առաջացել էին հրդեհներ։ Այրվում էին ամբողջ քարվանսարաներ, մեծ ու մանր խանութներ եւ տներ։ Միջոց եւ ճար չը կար փրկութեան. ամեն ոք իր աւերակների շուրջը պտտելով ու վայ տալով, այնտեղ կենդանի թաղվածների վրա էր ողբում։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Երկրաշարժից վնասվածների համար շաբաթական կազմվում է ժողովարարութիւնը։ Անդրկովկասի շատ քաղաքներում սկսվել է հանգանակութիւն։ Բաղումում, ուր գործում է նպաստամատոյց գլխաւոր մասնաժողովը, այնքան շատ է նուիրատուների թիւը, որ չորս ժողովարարներ, որոնք նշանակված էին դրամ և իրեր ընդունելու համար, անկարող հանդիսացան նուիրատուներին ցուցակագրել և նրանց բերածներն ընդունել, ուստի մասնաժողովը աւելացրեց ժողովարարների թիւը։ Թիֆլիսում ժողովարարութիւնը նոր է սկսվել և կատարվում է լրագիրների խմբագրութիւնների միջոցով։

Կարիքը շատ մեծ է և նրան բաւարարութիւն տալու համար հարկաւոր է մի միլիոն ռուբլուց աւելի գումար։ Առ այժմ ծախսելու համար պատրաստ է աւելի քան 100,000 ռուբլի։ Այդ գումարի մէջ է Թագաւոր Կայսրի նուիրած 50,000 ռուբլին, Թագուհուց 5000 ռուբլի, Թագաժառանգի նուիրած 1000 ռուբլի, Մեծ-Իշխանուհի Եւգենիա Մակսիմիլեանովնայից 1000 ր., կովկասեան կառավարչապետից 3000 ր., Բուխարայի էմիրից 3000 ր., Կարմիր Խաչի ընկերութիւնից 25,000 ր., Թաղիեվից 5000 ր., Բաքուի քաղաքային ինքնավարութիւնից 1000 ր., Կասպի-Զերնօմորեան ընկերութիւնից 3000 ր., օր. Վարդանեանից 1000 ր., Ասադուլլաեվից 600 ր., Կաշչիեվից 500 ռուբլի և այլն։ Լրագիրների ձեռքով և մասնաւոր հանգանակութեամբ ժողովված է մինչև 8000 ռուբլի։

Շամախի ուղարկված են բազմաթիւ բժիշկներ, ֆելդշերուհիներ և դեղութեան քոյրեր։ Ամեն օր ուղարկվում են այնտեղ ուտելեղէն և հագուստեղէն։ Շորերը, Շամախի ուղարկվելուց առաջ, ենթարկվում են Բաքուում յատուկ դեզինֆեկցիայի, որպէս զի ոչ մի կասկած չը մնայ, թէ նրանք աղտոտ են որ և է հիւանդութեան սաղմերից։

Բաքուում պատրաստութիւններ են տեսնվում ընդունելու այն շամախեցիներին, որոնք անկարող են իրանց համար բնակարան ունենալ ծանօթների և ազգականների մօտ։ Այդ նպատակով յարմարեցվում են Բաքուի տօնավաճառի փայտեայ շինութիւնները։

Օգնութեան գործը կազմակերպվել է և կազմակերպվում է։ Մնում է, որ հասարակութիւնը իր նուէրներով կարողանայ միջոց տալ գործող մասնաժողովներին կատարելու նրանց վրա դրած պարտաւորութիւնները բաւարար կերպով։

ԳԻՒՂԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Շամախու երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները. 1) Փաշօ Եղիգարեանից եւ որդուց—50 ռուբլի, 2) Առաքել Վարդապետեանից—5 ր., 3) Տիկին Նազլու Դօլուխանեանից—5 ր., 4) Գ. Միրաքեանից—2 ր., 5) Գ. Շահումեանից—5 ր., Մ. եւ Գ. Գալստեաններից—2 ր., 6) Տիկին Մելիքեանից—1 ր., 7) Յ. Ամիրխանեանից—10 ր., 8) Բ. Բանաթրեանից—2 ր., 9) սրդ-նախեցիներից—2 ր., ընդամենը 84 ռուբլի, իսկ նախկին ստացածի հետ միասին 279 ռուբլի։ Բացի սրանից ստացված են երեք կապոց չորեր բժիշկ Գ. Թարխանեանից, տիկին Թումանեանից եւ մի այլ տիկնոջից. նախկին կապոցների հետ միասին 5 կապոց։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻ ԱՄՍԱԳԻՐ

Ռուսերէն խմացող մեր ընթերցողների, մանաւանդ գաւառաբնակների եւ նիւթական նեղ միջոցներում գտնվողների ուշադրութիւնն ենք դարձնում ռուսերէն «Журналъ для всѣхъ» հանրամատչելի եւ խիստ համակրելի ամսագրի վրա։

Ամսագիրը ոչինչ առնչութիւն չունի վերջերս բազմացած էժանագին հրատարակութիւնների հետ, որոնք ամերիկեան ձեւով ըէկլամներ են տարածում ամենուրեք, խոստանալով հազարու մի պրէմիաներ, յաւելուածներ եւ այլն, իսկ իրականապէս տալով անյայտ, անհամ ու անհոտ գրչակների թոթովանքներ, մեծ մասամբ համակված են խիստ չօվինիստական ոգով։

Այս հրատարակութիւնը, որի վրա մի քանի տարի առաջ մենք դարձրել էինք «Մշակի» ընթերցողների ուշադրութիւնը եւ այժմ ջերմ յանձնարարում ենք չորսամեայ մօտիկ ծանօթութիւնից յետոյ, մասնակցում են նոյն ոյժերը, որոնք առաջադէմ ամսագրերի զարդն են։

Մասամբ իր ծաւալի չնորհիւ, որ թոյլ չէ տալիս բելլէտրիստական բաժնին նուիրել շատ էջեր, ամսագրի այս բաժինը համեմատաբար թոյլ է, բայց գրուածքները տոգորված են այն ոգով, որ ռուս գրականութեան ամենալաւ տրադիցիան է կազմում—սէր դէպի զրկվածները։ Այս բաժնում երբեմն մասնակցում են՝ Մ. Գորկիյ, Անտոն Չեխով, Կ. Բարանցեվիչ, Մամին, Լ. Անդրէեվ, որ հռչակվելու վրա է եւ այլն։

Հրդեհների բոցավառ լեզուակները, վիշապային գոռում-գոչումով դէպի վեր բարձրացրած, ոպառնում էին մօտեցողին եւ բոցավառում երկինքը։ Այս սոսկալի տեսարանի միջից հեռու եւ մօտիկ լսելի էին մարդկային զարհուրանքի եւ շուարածութեան յուսահատ աղաղակներ։ Սարսեցուցիչ այդ աղաղակների ձայնը ուժեղանում եւ նուազում էր երկրաշարժների կրկնութիւնների եւ հրդեհների տարածման աղդեցութեան տակ։

Երեկոյեան ժամը 8-ին մէկը միւսից 15 բոպէ յետոյ տեղի ունեցան դարձեալ երկու սոսկալի հարուածներ։ Ահարկու դղրդիւնով փլվում էին աւերակների մնացորդները եւ գիշերային լռութեան մէջ միախառնվելով մարդկային գոռում-գոչումների հետ, այնպիսի սարսափելի տպաւորութիւն էին գործում, որ մարդ կարծում էր, թէ այդ երկու որոտալից ձայները աչխարհին վերջ էին սպառնում։ Ողբալի եւ յուսահատեցնող էր տեսարանը։

Աղէտի օրը հինգշաբթի էր, թուրքերի «Ջումա-ախշամին», բոլոր բաղնիքները լիքն էին թուրք կանանցով, որոնց ամենի գերեզմանները դարձան տասնեակ բաղնիքները (բացի մէկից)։ Ջումա-Մեչիդին կից ուսումնարանն էլ մի ընդհանուր գերեզման դարձաւ բազմաթիւ թշուառ մանուկների համար իրանց հայ ուսուցչով։ Հայոց եկեղեցին, որտեղ ահագին բազմութիւն կար ննջեցեալ լինելու պատճառով եւ քաղաքային երկու ուսումնարանները բարեբաղդաբար կանգուն մնալով, ազատում են մահից մի քանի հարիւր հոգի։ Քրիստոնեաների թաղում առհասարակ այն աւերումները տեղի չեն ունեցել, ինչպէս եղել է թուրքերի թաղում, որ առաջինից 3—4 անգամ թէ մեծ եւ թէ բազմամարդ է, երեւի այն հանգամանքի պատճառով, որ թուրքաց թաղի տները մեծ մասամբ հին եւ խախուտ էին, բայց չարժը այնքան ուժգին էր, որ թէ հին եւ թէ նոր շինութիւնները միատեսակ չէն դիմացել նրա առաջ։

Ընդհանուր զոհերի թիւը ենթադրվում է առնուազը 1500 հոգի, որոնցից հայերի ճիշդ թիւը 30 է։ Աղէտի ցերեկով լինելը ամբողջ կենդան մնացածներին փրկել է մահից, այն ինչ գիշերով չնչին % կազմվէր։

Շարժը գաւառում նոյնպէս թէեւ շատ տներ է փլել, բայց մարդկային զոհեր գրեթէ չէ տարել. հէնց այս պատճառով տեղային գունդը եւ գիւղացիները մեծ օգնութիւն հասցրին իբր գործաւորներ։

Ականատեսները պատմում են, որ քաղաքից դէպի արեւելք 35 վերստի վրա մեծ հրաբուղխ է բացվել երկրաշարժի հետ միաժամանակ եւ տեւել է 2 օր։ Այսօր թէեւ շարժը սկսվելուց անցել է 4 օր, բայց դեռ ուժեղ եւ թեթեւ ցնցումները ստէպ շարունակվում են։ Գաղթականութեան ծայրը բացվեց եւ շարունակվում է. իսկ մենք՝ մնացածներս, նստած աւերակների վրա, փողոցներում, դաշտում, բաց երկնքի տակ փայտներով ծածկված, քաղցած ողբում ենք մեր դառն օրը։

Սմբատ Սարգիսբէկեան

Դրա փոխարէն հարուստ եւ բազմակողմանի է ամսագրի լուրջ յօդուածների բաժինը։ Այստեղ պատմական ճիւղում ընթերցողը հանդիպում է յայտնի պրոֆէսոր Կլիուչեվսկու անուան, տ. Ա. Եփիմենկօի, Ալ. Կիզեվետէրի. քննադատական բաժնում—Անդրէեվիչի (Եվ. Սոլովեվ), շնորհալի եւ գիտնական Ա. Գօրնֆիլդի, Զ. Վիտրինսկուն եւ այլն. հասարակական բաժնում՝ տնտեսագէտ պրոֆ. Ն. Կաբլուկովի, մանկավարժ Կապտերովի, պրոֆէսոր Օզերովի. բնագիտական բաժնում—պրոֆ Ֆաուսէկ, պրոֆ. Շիմկեվիչ, ֆիզիկոս Ֆվօլսօն։

Ամփոփ եւ առանձին խնամքով են կազմվում ներքին եւ արտաքին տեսութիւնները, որոնց մասնակցում են անպայման առաջադիմական ոգով ղեկավարվող գրողներ։

Մատենախօսական բաժնում ընթերցողը կը գտնէ ուշադրութեան արժանի նոր գրքերի հեղինակաւոր տեսութիւններ։

Վերջապէս ամսագրի գեղարուեստական բաժինը յետ չէ մնում լաւ իլլիւստրասիոններից, այն զանազանութեամբ միայն, որ այդ բաժնի ղեկավարողը անում է խիստ ընտրութիւն, տալով միայն կենսունակ գեղարուեստի արտադրութիւններ, հանդերձ բացատրական յօդուածներով։

Մեր առաջ են դրած անցած տարվայ համարները, որ կազմում են մի գիրք 800 երեսի մօտ, ծաւալը «Արարատից» քիչ փոքր, վաթսունից աւելի գեղարուեստական պատկերներով, բազմաթիւ նկարներով եւ այլն։

Ամսատետրը արժէ տարեկան մէկ ռուբլի ճանապարհածախսով։ Խմբագրութեան հասցէն՝ Петербургъ, Спасская. № 26.

Պետրոս Զաքարեանց

Ալէքսիս.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Ցունվարի 28-ին

Շուշում մի որոշ շրջանի կանանց եւ օրիորդների մէջ մի չատ գեղեցիկ միտք էր յղացել. նրանք կամենում էին կանանցից մի ընկերութիւն կազմել, որ եւ է մի գործով պարապելու եւ ինքնուրոյն աշխատանք ձեռք բերելու համար։ Նրանց ծրագիրը չատ ընդարձակ էր, բայց զանազան հանգամանքներ, որոնք առաջ էին գալիս տեղական պայմաններից, դժուարացնում էին գործը։ Վերջապէս կանգ են առել արհեստանոց բանալու վրա եւ այժմ մեծ եռանդով աշխատում են իրագործելու այդ միտքը։

Առաջներում մեզ մօտ միայն ծայրայեղ կարիքն էր ստիպում կանանց ինքնուրոյն աշխատանքի վրա մտածելու, այն էլ աշխատում էին այնպէս անել, որ ոչ ոք չիմանայ, կամ թէ գոնէ չը տարածվի, որ այս ինչը ուրիշի համար կարում, կամ գործում է, որովհետեւ այդ բանը պակասութիւն էր համարվում, ուստի գործի կարօտները իրանց չատ ճնշված էին զգում հասարակութեան մէջ։ Բայց հիմա ուրիշ բան է։ Մեծամասնութիւնը զգում է ազատ ապրելու քաղցր պահանջը. չատ չատերը խոր համոզված են, որ չքաւոր ամուսնու եւ չքաւոր ծնողների, կամ հասարակութեան շնչից ծանր քարի պէս կախվելն է պակասութիւն, նոյն իսկ ստորութիւն եւ ոչ թէ ինքնուրոյն աշխատանքով ապրելը... դրա համար էլ փոքր ի չատէ աչքաբաց, ինքնաճանաչ կինը աշխատում է, ինչպէս եւ ինչ կերպ կարող է, գործ դնել իր ոյժերը, ընդունակութիւնները եւ ապրել իր սեփական աշխատանքով։

Մեր քաղաքում, բացի այդ նոր բացվող արհեստանոցից, կան եւ մի երկու արհեստանոցներ եւ անթիւ կար անող կանայք։ Դեռ մի քանին էլ գնացել են Թիֆլիս վկայական ձեռք բերելու համար։ Գուցէ հեռուից լսողը կարծէ, թէ գործ չատ լինելուց են չատանում եւ արհեստանոցների թիւը, եւ կար անող կանայք։ Տարաբաղդաբար, այդպէս չէ։ Ընդհակառակը այդ արհեստանոցները գտնվում են իրար հետ թշնամական յարաբերութեան մէջ, որը առաջ է գալիս իրարից գործ, աշակերտուհիներ խլելու մրցումից։ Կար անող կանանցից ամենաճարպիկներին է աջողվում պատուէրներ ձեռք բերել։ Մրցումը խիստ նկատելի է, բայց ափսոս որ արհեստի հմտութեամբ չեն մրցում, այլ իրար պախարակելով, իրար գործը վատաբանելով։

Այդ արհեստանոցներն ունեն եւ աւելի զօրեղ ու վտանգաւոր ախոյեաններ, որոնց դէմ կարելի է մրցել միայն ընդհանուր ուժով։ Այդ ախոյեանները այն տղամարդիկն են, որոնք ունեն կանոնաւոր արհեստանոցներ եւ չատ հմուտ են իրանց արհեստի մէջ. նրանք պատրաստում են կանացի հագուստ։ Շատ ծիծաղելի մի բան։ Ասացէք, ինդրեմ, ինչու պէտք է տղամարդիկ պատրաստեն կանանց հագուստները։ Մթթէ տղամարդկանց համար նեղ է աշխատանքի ասպարէզը։ Եթէ կարն էլ նրանք անեն, ապա կինը ինչով հայթայթէ իր ընտանիքի ապրուստը, եթէ նա դրանն աշխատող տղամարդ չունի։ Զէ՞ որ նրա երեխան էլ նրանից տաք ընակարան, հագուստ, սնունդ եւ վերջապէս ուսման ծախս է պահանջում։ Ուրիշ տեղեր չը գիտեմ ինչպէս է, բայց մեր Շուշում, եթէ կինը լուացարար չէ, հացարար չէ եւ էլի դրանց նման մի բան, չէ կարող աղախին լինել, նրան էլ ոչ մի գործ չէ մնում, բացի կարից. եթէ կարն էլ տղամարդն անէ, ապա կինը ինչ պիտի անէ։

Լաւ կը լինէր, որ այդ մի քանի մանր մունր արհեստանոցները, հէնց իրանց սեփական շահի տեսակէտից դատելով, միանային եւ իրանց ձեռքի տակ հաւաքէին կար անող կանանց եւ ընդհանուր ուժով առաջ տանէին գործը, ճոխացնէին իրանց արհեստանոցը ամեն տեսակ ձեռագործներով։ Այդպիսով արագ կերպով առաջ կընթանար գործը եւ կիրականանար այն գեղեցիկ յոյսերը, որն այժմեան պայմաններում միայն ցնորք կարելի է համարել։

Մեր վաճառականները չատ պատրաստի բաներ են բերում եւ մեզ վրա ծախում, մինչդեռ մեզ մօտ աւելի գեղեցիկ կարելի է պատրաստել, հարկաւոր է միայն սովորութիւն գցել, տարածել։

Տիկին

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Ցունվարի 26-ին

Ցունվարի 27-ին թեմական դպրոցի դահլիճում վեց եկեղեցիների ծխականների պատգամաւորների առաջին ժողովն էր։ «Աղքատաց հոգաբարձութեան» նախագահ Տ. Խօջայեան հարցրեց, արդեօք ժողովը ցանկանում է ընտրել առանձին նախագահ ընդհանուր ժողովի։ Նախագահ ընտրվեց Տ. Խօջայեանը, եւ նախագահեց անաչառ մինչեւ վերջը։ Գր. Զալխուշեան առաջարկեց յայտնել ժողովի շնորհակալութիւնը սրբազան առաջնորդին, որի ջանքովը կանոնադրութիւնը փոխվեց եւ փոխանակ առաջվայ ամբոխի՝ այժմ ընտրվում են պատգամաւորներ, ուստի եւ տիրում է եւ պիտի տիրէ կարգ ու կանոն։ Պ. Զալխուշեանի առաջարկութիւնը ընդունվեց միաձայն։

Կարդացվեց հաշիւները ստուգող յանձնաժողովի զեկուցումը, որից երեւաց, որ Նոր-Նախիջեւանի հայազգի աղքատաց հոգաբարձութեան գործերը նախանձելի դրութեան մէջ են եւ արժանի են քաջալերութեան։ Միայն 1896 եւ 1897 թուերի հաշիւներում պակասում են 1700 ր. վաւերաթղթեր եւ առհասարակ անկանոնցի հաշիւները խառն են։ Վերջին 1899 եւ 1900 թուերին հոգաբարձութեան բոլոր մատեանները օրինաւոր են, վաւերաթղթերը հաստատում են բոլոր ծախքերը մանրամասն։ Հաշիւների մասին մէկ ուրիշ անգամ մանրամասն կը խօսենք։

Հասկանալու համար, թէ ինչ մեծ դեր է խաղում հոգաբարձութիւնը, բաւական է ասել, որ նրա բոլոր գումարները եւ անշարժ կայքը հասնում են հինգ հարիւր վաթսուն հազար ռուբլու. 1900 թուին եկամուտ եղել է 48,361 ր. եւ ծախք՝ 49,166 ր. 40 կ.։ 256 խնդիրներից 185 բաւարարութիւն են ստացել։ Հոգաբարձութիւնը ունի 16 թոշակաւոր սաներ բարձր դպրոցներում, պահում է մի անկեղանոց, որտեղ պատսպարվում են 60 այր եւ կին, ունի աշխատանոց եւ այլն։ Ժողովին ներկայ էին 60 պատգամաւորներից 41 եւ 1896 եւ 1897 հաշիւները ընդունվեցին մեծամասնութեամբ 36 ձայների ընդդէմ 5 ձայների եւ դրանով վերջ տրվեց անվերջ, անհամ, անօգուտ վէճերին։ Վէճերը ոչինչ չը պարզեցին, հոգաբարձութեանը ոչ թէ օգուտ չը տուին, այլ վնասեցին։ Այժմ հոգաբարձութեան գործերը կը ստանան աւելի կանոնաւոր ընթացք։ 1898, 1899 եւ 1900 թուերի հաշիւները ընդունվեցին միաձայն։

Հոգաբարձութեան գործավար Կ. Բուդաղեանն կարդաց մի մեծ տեղեկագիր հոգաբարձութեան գործերի մասին։ Այդ զարմանալի տեղեկագիրը մէկ տեսակ նախատինք եւ ծաղր էր հոգաբարձուների համար։ Խօսքը հոգաբարձուների գործունէութեան համար չէր, այլ կանանց եւ օրիորդաց նպաստամատոյց յանձնաժողովի համար։ Կարելի էր կարծել, որ բոլոր բանը անում են եւ աշխատում են միայն նպաստամատոյց յանձնաժողովի անդամները, իսկ հոգաբարձուները միայն ականատեսներ են հանդիսանում, մինչդեռ 49 հազար ծախսից միայն երկու հազարը այդ յանձնաժողովի ձեռքով է եղած։ Քանի մի անդամներ իրանց զարմանքը յայտնեցին այդ մասին։ Սակայն ի վերջոյ բոլորը պարզվեց՝ 1899 եւ 1900 թուերին կանանց եւ օրիորդների նպաստամատոյց յանձնաժողովի նախագահը եղել է տ. Բուդաղեանը։ Մենք ոչինչ չունենք, որ աղքատաց հոգաբարձութեան գործավար պ. Բուդաղեանը գրէ տ. Բուդաղեանի գործունէութեան մասին։ Բայց կարելի չէ՞ր արդեօք դրա մասին առանձին տեղեկագիր կազմել եւ գլխաւորը այդ տեղեկագիրը չը կարդալ պատգամաւորների ժողովներում։ Ցամենայն դէպս ժողովը մեծ կասկածանքի մէջ էր, արդեօք հոգաբարձուները իրանք կարդացել են իրանց տեղեկագիրը, թէ չը կարդացած են ստորագրել։ Պատիւ է բերում կանանց եւ օրիորդներին, որ նրանք աշխատում են, բայց չենք կարծում, որ նրանք կարօտ լինեն պ. Բուդաղեանի արջի երախտիքին։

Ժողովը փակվելուց առաջ Գր. Զալխուշեան յայտնեց, որ ժամանակ է արդէն Մ. Նալբանդեանի գերեզմանի վրա մահարձան կանգնել. նրա մօտը կայ արդէն 700 ռուբլի, բայց պէտք է աւել լինի. նա յոյս ունի իրագործել մահարձանը նոյն իսկ այս տարի եւ ի միջի այլոց դիմում է եւ աղքատաց հոգաբարձութեան։ Մ. Նալբանեան յանձնել է քաղաքին Հնդկաստանից բերած Մասեհ Բաբայանի գումարը. այդ գումարը, որը հասնում է 174 հազարի, այժմ պատկանում է աղքատաց հոգաբարձութեան։ Պ. Զալխուշեան կարծում է, որ հոգաբարձութիւնը պէտք է նուիրէ այդ գործին առնուազն հինգ հարիւր ռուբլի։ Պ. Գ. Զուբար առարկեց, որ 500 ռուբլի քիչ է եւ առաջարկեց տալ հազար ռուբլի։ Ժողովը միաձայն որոշեց առաջարկել հոգաբարձութեան՝ ըստ կարելոյն նպաստամատոյց լինել այդ գործին։ Պ.պ. Գ. Զուբար եւ Կ. Խօջայեան մտադիր են բողոքել ժողովի վճռի դէմ 1896 եւ 1897 թ. հաշիւների մասին։

Հ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 7-ին

«Մշակի» № 29-ի մէջ կարդալով Թիֆլիսի քահանաների ապահովութեան գանձարանի ամսիս 5-ին եղած զեղծումներով լի ժողովների մասին, յայտնում եմ, որ ես այդ ժողովներում չեմ եղել, թէեւ ցանկութիւն ունէի լինել եւ առանց տատանվելու ու խեղդվելու խօսել արդարութիւն միայն։ Այո՛, մեր քահանայ ղեկավարներից մի քանիսը շատ բան են փչացնում, իրանց չուրջը ժողովելով քահանաներից ընտրովի չը հասկացողներին, իսկ թէ ինչու հասկացողներն էլ յետ են քաշվում եւ ասպարէզը թողնում նրանց եւ յետոյ վայնասուն գցում, այդ ինձ համար խիստ անհասկանալի է։

Աւելացնում եմ եւ այս, թէ «Մշակում» տպված վերոյիշեալ նամակի տակ դրված «Քահանայ» ստորագրութիւնը իմը չէ, ինչպէս կարծում եւ տարածում են։

Ցարութիւն քահ. Ծուղուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աստրախան, յունվարի 15-ին

Կարդացի «Մշակի» անցած դեկտեմբերի 290 համարում զետեղված «Ժողովականի» նամակը։ Որպէս զի չը կարծվի լռութիւնը համաձայնութեան նշան՝ կասեմ միայն այսքանը։

Ես ձեռնադրվել եմ քահանայ Աստրախանի ս. Կատարինէի եկեղեցում ամենօրեայ ժամասացութիւն անելու համար։ Ինձ շատ լաւ յայտնի էին այն հանգամանքները, որոնց մէջ ես գտնվելու էի, բայց յոյս ունենալով ինձ վրա, որ ապագայում աշխատասիրութեամբ ձեռնհաս կը լինեմ բարեւոքելու իմ կեանքս, առանց տատանվելու յանձն առայ այդ պատուաւոր հրաւէրը։ Եւ ես սկսեցի իմ ֆիզիկական ուժերից վեր՝ աշխատել, սակայն մի քանի կարեւոր հանգամանքների պատճառով, որոնց մասին ես լռում եմ, միսիթարական ոչինչ չէի նախատեսում այլ եւս. բայց չը համարելով ինձ իրաւունք ոչ ոքից ոչ մի պահանջ անել, ես բարեւոք դատեցի «սուս ու փուս» հեռանալ քաղաքից։ Ստանալով թեմիս Առաջնորդից հաճութիւն այդ մասին՝ չուտափոյթ կարգադրեցի ընտանեկան գործերս, իսկ նոյեմբերի 25-ին, ս. Կատարինէ եկեղեցու տօնի հսկման պատճառով եկած բազմութեան տուի իմ օրհնութիւնս եւ հրաժեշտի ողջոյնս հետեւեալ օրը ճանապարհ ընկնելու դիտաւորութեամբ նոր պաշտօնավայրս, Արմաւիր աւան, Կուբանեան գաւառ։ Ժամերգութիւնից յետոյ ժողովրդականները եկան ինձ մօտ եւ ինդրելով խնդրում էին չը հեռանալ Աստրախանից գէթ ի սէր աշակերտների։ Նրանք իմանալով իմ տեղափոխութեան իսկական շարժառիթները՝ խոստացան կանոնաւորել իմ կեանքս եւ ապահովել ինձ։

Ես խօսք տուի նրանց։ Հազիւ նրանք դուրս էին եկել եւ ահա ըէալական դպրոցի բարձր դասատան աշակերտները թափվեցին ինձ մօտ յայտնելու իրանց շնորհակալութիւնը եւ ուրախութիւնը։ Ես խոնարհվեցի ժողովրդի ջերմ համակրութեան առաջ, իսկ իսպառ անզգայացի աշակերտների անկեղծ սիրոյ առաջ։ Ուստի հետեւեալ առաւօտ յայտնեցի նորին բարձր սրբազնութեան այդ անցքի մասին, խնդրելով մի խորհուրդ։ Նա թողեց իմ ազատ կամքիս։ Հետեւեալ օրը յայտարարեցի ես կոնսիստորիային իմ տեղափոխվելու մտադրութիւնս։ Յետ կենալս, որովհետեւ արդէն պաշտօնական կարգադրութիւններն եղած էին։ Անցեալ դեկտ. 16-ին գումարվեց ծխական ժողով, որտեղ ձայնով ընդդէմ 30-ի որոշվեց տալ ինձ տարեկան 300 ռուբլի եւ վառելափայտ։

Ահա գործի իսկութիւնը։ Ահա թէ ինչպէս մի ամբողջ հասարակութիւն, ըստ ասութեան «Ժողովականի», խաբվել է եւ կոյր մոլորութեան մէջ ընկել, ինչու որ գնահատելով իր քահանայի եւ միանգամայն ուսուցչի գործունէութիւնը կամեցել է բարւոքելով նրա կեանքը՝ ձեռքից բաց չը թողնել նրան։

Ղեւոնդ քահ. Այտընեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, փետրվարի 7-ին, Նորին Կայսերական Բարձրութիւն Օլդէնբուրգեան պրինցուհի Եւգենիա Մաքսիմիլիանօվնա, Անդրկովկասեան երկաթուղու արտակարգ գնացքով, ուղեւորվեց դէպի Բաթում։ Նորին Բարձրութեան ճանապարհ գցելու համար երկաթուղու կայարանում հաւաքվել էին տեղական բարձր իշխանութեան ներկայացուցիչները եւ այլ պաշտօնական անձինք։ Նորին Բարձրութիւնը Բաթումից ուղեւորվելու է Գագրի, ուր այժմ գտնվում է նրա ամուսին Օլդէնբուրգեան պրինց Ալէքսանդր Պետրովիչ։

Հինգշաբթի, փետրվարի 7-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում տեղի ունեցան նիստ՝ քննելու համար այն յայտարարութիւնները, որ տուել են պալատին Թիֆլիսի քաղաքային ուղղավայի նախկին անդամներ Իվանենկօ եւ Վերմիշեվ եւ որով նրանք խնդրում են լրացնել քաղաքային գործի վերաբերմամբ կայացած դատավճիռը, որոշելով տալ նրանց այն ոճիրը, որ պէտք է ստանային նրանք պաշտօնից հեռացման օրից մինչեւ դատավճռի օրը։ Դատաստանական պալատի որոշումը Իվանենկօյի եւ Վերմիշեվի այդ յայտարարութեան մասին դեռ եւս չէ յայտնված։

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Թիֆլիսի քահանաները, թուով 63, մի խնդիրքով կոնսիստորիայի միջոցով դիմել են սինոդին եւ Վեհափառ Կաթողիկոսին, որ այլ եւս գիւղերից, գաւառաքաղաքներից քահանաներ չը տեղափոխվեն Թիֆլիս եւ նորերը չը ձեռնադրվեն այլ եւս, չափազանց համարելով 63 թիւը։ Քահանաներին այսպէս տաքացրել է այն հանգամանքը, որ էլի Թիֆլիս տեղափոխելու ցանկութիւն ունեցողները խնդիրներ են մատուցանում հոգեւորականութեան եւ աղաների միջնորդութիւններով աշխատում են աջողեցնել գործը։ Աւելացնում ենք, որ 63 քահանաներից երեքը մինչեւ օրս դեռ առանց ծուխի են, իսկ հինգը օգնական կաններ են եւ բերանները բաց սպասում են տեղի եւ ծխի։ Տեսնենք ինչ կը լինի»։

Մեզ խնդրում են հաղորդել, որ կիրակի, փետրվարի 10-ին, Աւճալեան ժողովրդական թատրոնում տեղի է ունենալու. մի ներկայացում։ Խաղալու են «Գասպար-Ամի» 4 գործողութեամբ պիէսը։

Կովկասեան յօբելեանական ցուցահանդէսի կօմիսար իշխան Անդրօնիկով միջնորդութիւն է յարուցել երկրագործութեան եւ պետական կարողածների մինիստրութեան առաջ, որով խնդրում է մի առանձին գումար նշանակել ցուցահանդէսից մնացած դէֆեցիտի գէթ մի մասը ծածկելու համար։

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ առաջին փոխառութեան տոմսերի յունվարի խաղարկութեան ժամանակ 200,000 ռուբլի տալիս է Կայսրի պաշտ-հեռագրատան կառավարիչ Կլեմենցկի, որ մի ամուրի եւ միայնակ անձնավորութիւն է։

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ցունվարի 31-ին տեղի ունեցած երկրաշարժը զգացվել է նաեւ Գանձակի գաւառի լեռնային մասի գիւղերում, աւելի ուժգին, քան քաղաքում, թէեւ բարեբաղդաբար տների ճեղքուածքներ կամ խորտակում ու մարդկանց հետ դժբաղդութիւն ոչ մի տեղ չէ պատահել։ Տեղի են ունեցել իրար ետեւից երկու ստորերկրեայ

հարվածներ։ Գանձակում երկրաշարժը զգացվել է քաղաքի այն մասերում, որոնք գտնվում են գետից մօտիկ ու թեքված են դէպի նրա հունը։ Միւս մասերում, մանաւանդ ծայրերում, երկրաշարժը համարեա աննկատելի անցաւ։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեր մէջ այս մի քանի օրվայ ընթացքում պարբերաբար կրկնվող երկրաշարժը մի տեսակ լարված դրութեան մէջ դրել քաղաքիս եւ թէ շրջակայ գիւղերի ազգաբնակութիւնը։ Առաջին ցնցումը, որ տեղի ունեցաւ յունվարի 31-ին կէսօրվայ 12 ժամ 45 րոպէին եւ տեւեց մօտ 15 վայրկեան, մեծ իրարանցում ձգեց ամբողջ քաղաքի մէջ։ Սարսափահար ամբոխը, կեանքն ազատելու համար, տներից եւ խանութներից դուրս թափվեց փողոց։ Դպրոցներում ընդհատվեցին դասերը եւ սատիկ վախեցած աշակերտներն ու աշակերտուհիները արձակվեցան տուն։ Շատերն էին խստովանում, որ դեռ այսպիսի խիստ երկրաշարժ չէին տեսել։ Ցնցումները կրկնվեցան երեկոյեան 7 ժ. 28 րոպէին, գիշերվայ՝ 12 ժ. 28 ր., 12 ժ. 45 ր., 12 ժ. 50 ր., 2 ժ. 50 ր., առաւօտեան, փետրվարի 1-ին, 7 ժ. 28 ր.։ Որովհետեւ, ինչպէս ցոյց էին տալիս թուերը, ցնցումները կրկնվում էին մի տեսակ պարբերաբար, ուստի եւ ենթադրվում էր, որ այդ օրը կէսօրվայ ժամին եւս՝ կարող է ցնցում տեղի ունենալ։ Ժողովուրդը լսել էր այդ եւ սարսափի մէջ էր։ Դպրոցներում դասաւանդութիւն չեղաւ։ Ամենքն էլ սպասում էին ցնցումի. բայց բարեբախտաբար որոշեալ ժամին ցնցում չեղաւ եւ ժողովուրդը փոքր ինչ հանգստացաւ։ Միայն թէ այդ օրը երեկոյեան, գիշերը մի քանի անգամ, հետեւեալ օրը (2-ին) առաւօտեան, երեկոյեան, գիշերը զգալի ցնցումներ տեղի ունեցան։ Դեռ մինչեւ այժմ էլ, կարծես, վերջնականապէս չէ դադարել երկրաշարժը։ Գիշերները զգալի են լինում շարժումներ, որոնք չեն կարող չազդել հասարակութեան ջղերի եւ երեւակայութեան վրա։ Մեր հասարակութեան բազմութիւնը անկարող է ըմբռնելու երկրաշարժի բնական պատճառները. նա այդ համարում է աստուածային պատուհաս, թշուառութեան ու աղէտների գուշակ։ Մեծ լքումն է տիրում մանաւանդ մեր գիւղացիների մէջ, որոնք հաւատալով «Եփիմերտէի» ցուցմունքներին, ասում են, որ այս տարի եւս պէտք է զրկվեն իրանց ընտանի կենդանիներից։ Ահա չարունակ մի քանի տարի է, որ կենդանիների մէջ տարածված վարակիչ հիւանդութիւնները քայքայում են մեր գիւղացու տնտեսական դրութիւնը եւ մատնում այս եւ այն վաշխառուի կամայականութեան։ Երկրաշարժը ոչ մի զգալի վնաս չէ տուել մեր գաւառին, բացի այն, որ սարսափ է ազդել բոլորի վրա։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԸ

—

Անգլիայում եւ Եապօնիայում օրվայ ամենամեծ դէպքը անգլօ-եապօնական նոր դաշնակցութիւնն է, որ կազմում է վերջին ժամանակների միջազգային ամենակարեւոր ակտերից մէկը։ Երեքպետեան դաշնակցութիւնից, երկպետեան դաշնակցութիւնից յետոյ մենք ունենք այժմ մի նոր երկպետեան դաշնակցութիւն։ Մինչեւ այժմ Անգլիան խուսափում էր որ եւ է պետութեան հետ պաշտօնապէս յայտնի դաշնակցութիւն կազմելուց. այժմ այդ եւս կատարվեց եւ Անգլիան ստիպված տեսաւ իրան դաշնակցութիւն կնքել ոչ թէ եւրոպական, այլ ասիական մի պետութեան հետ։ Նոր երկպետեան դաշնակցութիւնը համարվում է Սալսբիւրիի մինիստրութեան համար դիպլօմատիական փառաւոր աջողութիւն եւ Չինաստանը, որի օգտին գլխաւորապէս կնքված է այդ դաշնակցութիւնը, ուրախութեամբ ողջունեց նրան եւ չտապեց յայտնել, թէ Անգլիայի հեղինակութիւնը նշանաւոր կերպով աճեց։ Եւրոպայում, ամեն տեղ, ահագին նշանակութիւն են տալիս անգլօ-եապօնական դաշնակցութեան։ Ֆրանսիական լրագիրները չեն կարողանում ծածկել իրանց դժգոհութիւնը եւ երկիւղը. մինիստրական օրգան համարվող «Le Temps» լրագիրը խոստովանում է, որ բրիտանական կառավարութիւնը մտադիր է նոր քաղաքականութեան հետեւել Արեւելեան Ասիայում. ազատ ձեռքերի քաղաքականութիւնը, որ մինչեւ այժմ քարոզում էր Անգլիան, դառնում է կապված ձեռքերի քաղաքականութիւն այդ նոր դաշնագրի շնորհիւ։ «Patrie» լրագիրը գտնում է, որ անգլօ-եապօնական դաշնակցութիւնը ուղղված է Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դէմ եւ վերջինիս չահերին։ Հնդկա-Չինաստանում այսուհետեւ վտանգ է սպառնում Անգլիայի եւ Եապօնիայի կողմից։ Արդեօք նա վտանգ է սպառնում եւ Գերմանիայի չահերին, թէ ոչ, ահա մի հարց, որ զսպազան կերպով է մեկնաբանվում։ Եթէ հաւատանք անգլիական լրագիրներին, Գերմանիան ոչ միայն մասնակցել է անգլօ-եապօնական դաշնակցութեան բանակցութիւններին, այլ եւ ապահովեցրել է իր չահերը առանձին համաձայնութիւն կայացնելով երկու պետութիւնների հետ։ Սակայն գերմանական լրագիրներին նայելով, այդ դաշնակցութիւնը բոլորովին անակնկալ է եղել Գերմանիայի համար։

Ռուսաց լրագիրները գտնում են, որ նոր դաշնակցութիւնը չէ կարելի համարել ուղղված Ռուսաստանի դէմ այն պարզ պատճառով, որ այդ դաշնակցութեան գլխաւոր շարժառիթը Չինաստանի եւ Կորէայի անկախութեան եւ ամբողջութեան պահպանութիւնն է, իսկ չէ որ Ռուսաստանը դեռ 1898-ին կնքեց Եապօնիայի հետ դաշնագիր Կորէայի անկախութեան մասին, միւս կողմից Գերմանիան 1900-ին համաձայնութիւն կայացրեց Անգլիայի հետ (որին միացան յետոյ բոլոր մեծ պետութիւնները) Չինաստանի անկախութեան մասին։ Այդ հիման վրա, ասում են ռուսաց լրագիրները, անգլօ-եապօնական դաշնակցութիւնը մի անկախ, նոր, ինքնուրոյն ակտ չէ, այլ միայն լրացումն ռուսա-եապօնական եւ անգլօ-գերմանական համաձայնութիւնների։ Ցամենայն դէպս, նոր դաշնակցութիւնը կարող է ուրախացնել մեզ, խաղաղութեան բարեկամներիս. որքան շատ թուով դաշնագրեր լինեն կնքված պետութիւնների եւ ազգերի մէջ, այնքան քիչ կը լինի պատերազմի հաւանականութիւնը։ Եւ անգլօ-եապօնական դաշնակցութիւնը պէտք է համարել ոչ թէ սպառնալիք համաշխարհային խաղաղութեան համար, այլ խաղաղասիրական մի նոր եւ նշանաւոր ակտ։

Օրվայ հրատապ խնդիր Անգլիայում մնում է նաեւ Հօլլանդիայի միջնորդութիւնը եւ առաջարկութիւնը անգլօ-բօէրական պատերազմի առիթով։ Այդ խնդրով յուզվում է եւ Հօլլանդիան։ Ամենքը, թէ Անգլիայում, թէ Հօլլանդիայում, համաձայն են եւ գովում են Նիդերլանդական կառավարութեան նախաձեռնութիւնը, թէեւ նա մնաց առանց որ եւ է հետեւանքի։ Հօլլանդիայում մի քիչ գրգռված են բրիտանական կառավարութեան մերժումով, բայց միւս կողմից հօլլանդական կառավարութեան միջնորդութիւնը ցոյց է տալիս, որ Անգլիայում արդէն զգում են անհրաժեշտութիւնը վերջ տալ այս եւ այն կերպով աղէտալի պատերազմին, մանաւանդ որ ինքն Էդուարդ թագաւորը ցանկանում է հաշտութիւնը կնքված տեսնել մինչեւ իր թագադրութեան օրը, այլապէս պէտք կը լինի յետաձգել թագադրութիւնը։ Ցամենայն դէպս տեղիք կայ յուսալու, որ այժմ Անգլիան մի քիչ աւելի զիջող կը լինի, եթէ բօէրների կողմից որ եւ է փորձ կատարվի հաշտութիւն կնքելու եւ խաղաղութիւն հաստատելու Հարաւային Աֆրիկայում։

Գերմանիայում, Վիլհելմ II կայսրի մի յայտարարութիւնը «քրիստոնեայ սօցիալիստների» դէմ ընդհանուր հետաքրքրութիւն է շարժել։ Ցայտնի է, որ «քրիստոնեայ սօցիալիստներ» անունով մի ամբողջ կուսակցութիւն կամ աղանդ կայ, որ սօցիալական չարիքների դէմ իբրեւ միակ միջոց ընդունում է միայն աղօթքը եւ սրբերի բարեխօսութիւնը Աստուծու առաջ։ Այդ վարդապետութիւնը տարածվել է Ամերիկայից. նրան հետեւողները զբաղվում են սպիրիտիզմով եւ քարոզում են, թէ հիւանդութիւնները կարելի է բժշկել նոյնպէս աղօթքով։ Այժմ կայսրը յայտնել է ոստիկանութեան նախագահին եւ բողոքական ընդհանուր վերակացու Ֆաբէրին, թէ մտադիր է միջոցներ ձեռք առնել այդ սպիրիտների եւ «քրիստոնեայ-սօցիալիստների» դէմ։

ՆԱՄԱԿ ԲՕԼԳԱՐԻԱՑԻՑ

—

Ֆիլիպէ, յունվարի 30-ին

Բուլգարիոյ մէջ Վանայէն եւ Ռուսչուկէն յետը՝ Ֆիլիպէն է երրորդ հայաշատ կեդրոնը, որուն ազգային կեանքէն աւելորդ չըլլար երբեմն «Մշակի» մէջ գրել։

Այս առաջին պատեհութիւնով, կարժէ նախ թռուցիկ ակնարկ մը ձգել Ֆիլիպէի երիտասարդութեան վրա, քանի որ համայնքի մը մըտաւորական, առաջդիմական ձգտումներուն վրա գաղափար մը կազմելու համար՝ միակ հայելին անոր մէջ մնանող երիտասարդութիւնն է։

Ձեմ ուզեր խօսքը ընել հասակով միայն երիտասարդու՝ իսկ գաղափարով ու ձգտումներով խոֆած պառաւներուն, որոնք, ինչպէս ամեն տեղ, Ֆիլիպէի մէջ ալ, դժբաղդաբար, պզտիկ թիւ մը չէ, որ կը կազմեն։ Բայց ատոնց դէմ կայ—թարմ, կենսատու երիտասարդ ուժերը, աճելու յոյսը ներշնչող, հակամէտ ծլելու եւ ձգտող դէպի լաւը։

Ու խոստովանիմ որ, Ֆիլիպէի երիտասարդութեան մէջ, գիտակից, առաջադիմական ու գաղափարական հոսանքը՝ երկու երեք տարիէ ի վեր է որ հաստատ հիմ դնել սկսած է։

Արդարեւ հինէն ի վեր Ֆիլիպէի հայութիւնը չարժուն ու եռուն կեանք մը ունեցած է. երիտասարդութիւնը աշխատելու ճիգեր ունեցեր է. բայց անոնք՝ մէկ կողմէ կարճատեւ ոգեւորութիւններու արդիւնք, միւս կողմէ հասարակութեան՝ ոչ-գիտակից, խրծբրծող ու հալածող տրամադրութիւններուն պատճառով՝ կարճ կեանք մը ունեցած են, ու ասոր ամենէն գլխաւոր պատճառը, իմ կարծիքով, գաղափարի մը ուժը, սերը իրենց յենարան եւ կէտ նպատակ ընտրած չըլլալն է։

Ասկէ եւրոպական պիտի ունենամ Ֆիլիպէի երիտասարդութեան արած քայլերուն արձագանքը ըլլայ. այս անգամ առնեմ միմիայն հայկական երկսեռ երգեցիկ խումբը իբրեւ օրինակ, որ Ֆիլիպէի երիտասարդութեան ջանքերուն աչքի զարնող կարեւոր արդիւնքներէն մէկն է։

Հայկական երկսեռ երգեցիկ խումբին գոյութիւնը երկար չէ—հազիւ մէկ-երկու տարի։ Շնորհիւ իրենց մէջ տիրող գաղափարական կապին,—որ զիրենք ամրապնդող էն զօրաւոր ազդակն է—եւ յարատեւութեան, երգեցիկ խումբը քիչ ատենուան մէջ կրցաւ կազմակերպուիլ եւ անցած տարուան մէջ յաջողեցաւ տալ մէկ-երկու կօնցերտներ։

Այս տարի նախորդ տարուան մէջ գտած ընդունելութենէն քաջալերուած, աւելի լաւ եռանդով մը կաշխատի։

Յունվար 7-ին երգեցիկ խումբը տուաւ կօնցերտ մը նախկիններէն աւելի յաջող։

Հանդէսը բացաւ երկսեռ երգեցիկ խումբը պ. Կարա-Մուրզայի ձայնագրած «Սրիք Հայկազունք»-ովը, որ խանդավառ ծափահարութիւններով ընդունուեցաւ ու կրկնել տրուեցաւ։ Երգեցիկ խումբին ձայնագրութեան դասատուն, պ. Պոլով, ֆլիւթով նուագեց Feilenberg-ի «Le bois des fées»-ը եւ պ. Սօթիրովի հետ միասին—Ke Oqué-ի «Vivat, vivat»-ը։ Տիկին Բ. Թամիրեանց—վարժ դաշնակահար մը—նուագեց՝ Կորդանեանի «Բայաթին» եւ Verdi-ի Nabucodonosor-ը, խիստ յաջող։ Պուլկարիոյ մէջ ծանօթ երգիչ պ. Ե. Օգոստինոսեան, որ երգեցիկ խմբին խնդրանքով Սօֆիայէն եկած էր կօնցերտին մասնակցելու՝ երգեց—Massenef-ի «Herodiade»-ը,—Wagner-ի «Tannhäuser»-ը եւ ուրիշ լաւ կտորներ հիանալի յաջողութեամբ, որոնք բուռն ծափերով ու «բիզ»-երով ողջունուեցան։ Երգեցիկ խումբը երգեց—«Հայ եղբայրներ», «Բաւ է որքան», «Կախարդան», պ. Կարա-Մուրզայի ձայնագրած «Լռեց ամպերը», «Մեր հայրենիք»-ը, «Մայր Արաքսի»-ն, որոնք մեծ ոգեւորութիւն առաջ բերին եւ լաւ ընդունելութիւն գտան։ Ծափահարութիւնները, «բիզ»-երը սրահը կը թնդացնէին։

Կօնցերտէն ետքը թատերասէր երիտասարդները ներկայացուցին Բաֆֆիի «Խենթէն» Բայազիդի պաշարումը, երկու վարագոյրի մէջ ամփոփուած։

Զը նայած ծննդեան օրերու պատճառով հանդէսը հապճէպ պատրաստութիւնով մը տեղի ունենալուն, ներկայացումը ոչ այնքան, բայց կօնցերտը սպասուածէն շատ յաջող դուրս եկաւ։

Խօսքս քանի որ երգեցիկ խումբին վրա է, ըսեմ որ, խումբը բաւական դժուարութիւն կը կրէ հայկական քառաձայն երգեր գտնելու համար։ Պ. Կարա-Մուրզայի եղանակներին—որոնք այնքան մեծ ընդունելութիւն կը գտնեն ինչպէս ըսի—խումբին ձեռքը գտնուածը շատ քիչ է, ան ալ արդէն սորվուած, հետեւաբար խումբը աւելին պէտք ունի, բան մը, որ պ. Կարա-Մուրզայի ուշադրութեան կը յանձնենք։ Եւ չի մոռնամ ըսելու որ, երգեցիկ խումբը լաւ մտածումը ունեցեր է իր ձեռքին տակ ունեցած երգերը վիմատիպ հրատարակելու եւ շատ դիւրամատչելի գինով մը ցրվելու, ձեռնարկ մը՝ որ պատճառ եղած է, կամաց-կամաց, ուրիշ քաղաքներ ալ երգեցիկ խումբեր կազմվելուն։

Հրանդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, թէ հօլլանդական կառավարութիւնը հաստատապէս վճռել է հրաժարվել այսուհետեւ որ եւ է միջամտութիւն գործելուց բօէրների գործերի մէջ։ Բազմաթիւ բանակցութիւնները մեծ պետութիւնների ներկայացուցիչների հետ համոզեցին հօլլանդական արտաքին գործերի մինիստր դոկտոր Կիւիպէրին, որ թէ եւրոպական պետութիւնները եւ թէ Ամերիկան մտադիր են լիակատար ազատութիւն տալ Անգլիային գործելու հարաւային Աֆրիկայում։ Դոկտոր Կիւիպէր համոզվել է նամանաւանդ, որ բօէրների զօրապետները Աֆրիկայում. ինչպէս նաեւ նրանց ներկայացուցիչները Եւրոպայում չափազանց զայրացած են. այս պատճառով ամեն մի բանակցութիւն խաղաղութեան մասին, գոնէ մօտիկ ապագայում, ոչ մի աջողութիւն ունենալ չէ կարող։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 7-ին տեղի ունեցաւ աղքատ եւ հիւանդ երեխաների մասին հոգ տանող ընկերութեան խեղանդամ եւ անդամալոյծ երեխաների համար ապաստարանին կից եկեղեցու եւ պրոֆէսիոնալ դպրոցի օրհնութիւնը։ Դպրոցի նպատակն է արհեստների մէջ կատարելագործել խեղանդամներին։

ՎՕԼՕԳԴԱ։ Փետրվարի 4-ին, երեկոյեան 6 ժամին, Կաղնիկովսկու գաւառում, Պետրով գիւղում, փայլատակումն ու կայծակ էր. վնասված է եկեղեցին։

ՊԵՏՐՕԶԱՎՕԴՍԿ։ Դպրոցները պատրաստվում են տօնելու Գոգոլի յօբելեանը. մտադրութիւն կայ «Գոգոլեան» անուանել մի ծիսական դպրոց։

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայում պօստային գրասենեակի 500,000 ր. արժողութեամբ շինութեան կառուցման նախագիծը հաստատված է։

Երկրագործական հասարակութիւնների ջանքերով կազմվում է երկրում մի ընկերակցութիւն երկրագործական գործիքներ շինելու գործարան կառուցանելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Մաքսային սակագինը քննող յանձնաժողովի մեծամասնութիւնը մի առաջարկութիւն արեց, որով պահանջում է հացի աւելի եւս բարձր մաքսահարկեր, քան այն, որոնք պարունակվում են օրինագծի մէջ. պետական քարտուղար Պոսադովսկի յայտնում է, որ կառավարութիւնները երբէք չեն համաձայնվի դրա հետ։

ԼԻԲԱՎԱ։ Ձայնաւորներ ընտրված են 27 գերմանացիներ, 5 ռուսներ, 5 լեհեր եւ 6 լիտովտիներ։ 8 կրքնաքուէարկութիւններ են լինելու։

ԲԷԼԳՐԱԴ։ Ժամանեց չէրնօգորիական մինիստր Բոուկովիչ։

ԵԱՀՏԱ։ Զուտ գարնանային օրերից յետոյ սկսվեցին ցրտեր. մեծ ձիւն է գալիս, ծովը յուզվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի համալսարանը շնորհել է 5 ոսկէ մեդալ, 4 արծաթէ եւ մէկ պրէմիա ի յիշատակ բնագէտների եւ բժիշկների առաջին համաժողովի։ Համալսարանի պատուաւոր անդամներ ընտրված են գիտութիւնների ակադէմիայի փոխ-նախագահ Նիկիտին, աշխարհագրական ընկերութեան փոխ-նախագահ Սեմենով, Մոսկվայի պրոֆէսոր Ցվէտաեվ եւ Բուդոլֆ Վիրխով։ Համալսարանում կան 3,708 ուսանողներ եւ 67 կողմնակի ունկնդիրներ։

Փետրվարի 7-ին վրաց ազնուականութեան պատգամաւորութիւնը ներկայացաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչին եւ Նրա Օգոստափառ Ամուսնուն։

8 փետրվարի

ՄՕՍԿՎԱ։ Օգոստափառ գեներալ-նահանգապետը այցելեց բուխարական էմիրին. էմիրը ճաշեց գեներալ-նահանգապետի տանը. օրվայ ընթացքում էմիրը այցելութիւններ էր գործում բարձրաստիճան անձանց. էմիրը հրաւիրված է վաղվայ կօնցերտին գեներալ-նահանգապետի տան մէջ։

ՀՌՕՄ։ Բացված է պարլամենտը. գահական ճառի մէջ յիշվում է ներքին գործերի մասին եւ ասված է, որ արտաքին յարաբերութիւնները գերազանց են։ Իտալական չահերի յայտարարութիւնը, հաւատարմութիւնը դաշնակցութիւններին եւ սրտակից բարեկամութեան կապերին անպայման համապատասխան են խաղաղութեան, որի պահպանութիւնը կազմում է Իտալիայի բարձր նպատակը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցերեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու գիշերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 ր.)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյեան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.)։

Պօստատար գնացք Բագուից դուրս է գալիս գիշերվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին)։

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.)։

Պօստատար գնացք Բաթումից դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. 12 ժ. 45 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.)։

Պօստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 10 ժ. (10 ժ. 58 ր.). հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրոպոլ 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.)։

Պօստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Ղարաքիլիսա երեկոյեան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.)։

Խառն գնացք Ղարաքիլիսայից դուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Թոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վիներ. և մորթու հ.

Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ. ԵՒ ԿՐԾՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергіевская ул., д. 12.

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՀԱՑ ՕՐԻՈՐԴ ԿԱՄ ՏԻԿԻՆ

երեխաներին խնամելու համար։ Բարեատինսկայա փողոց, № 8, իշխ. Թումանեանի բնակարան։ 1—3

Հաւլաբարում, կիրակի, փետրվարի 10-ին, 15-րդ Գրենադերեան զօրագնդի դահլիճում

Հայ թատերասէրները

ՑՕԳՈՒՏ XII ՔԱՂ. ԵՐԵԽ. ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

կը ներկայացնեն

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ

կօմ. 3 գործ. Պարոնեանի, փոխ. Սարդ. եւ Վրոյր

ԲՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Կատակ 1 գործ. Մոլիեռի, թարգ. Զմշկեանի

Մասնակցում են օր. Եղիսաբէդ, պ.պ. Մարիկեան, Ազեան, Սանթուրճեան, Մուրադեան, Աչոտ եւ այլք

Սկիզբը 7 ժամին երեկոյեան։

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գէոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դիմրցօվայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ամֆալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։

67—100

ԳՐԱՍԵՆԵԱԿ

„ՍԱՍՈՒՆ“

Բանալով Աստրախանում յանձնարարական գրասենեակ՝ ընդունում ենք վաճառելու, գնելու ու տեղափոխելու ամեն տեսակ ապրանքներ, թէ Պարսկաստանից եւ թէ Կովկասից։ Ամենայն ձմեռ մեզանից մէկը լինելու է Բագուում, ուր լինելու է բաժանմունք։

Ցանձնարարութիւնները կը կատարվեն ճըշդութեամբ եւ շուտ։

Մեր հասցէն՝ Астрахань, Контора «Сасунъ».

Ալ. Գիւրջեան
Թում. Մեհերեան

7—8 (չ. չ.)

ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

Օր. Սաթենիկ ԾԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։

(Հ. կ.) 38—60

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պօպովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 40—100

ԳՈՒՏՏԻՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են՝

«Կիրակոս Պատմագիր», աշխատ. Ոսկան Տէր-Գէորգեանի—1 ր.
«Մէքսա պատմագիր» » » » 50 կ.
«Յովհաննէս եպիսկոպոս Շտխոթունեանի կենսագրութիւնը», գրեց Արիստ. եպ. Սեդրակեան—
«Սամուէլ քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Ար. Տէր-Միքայէլեան—1 ր. 2
«Պարզ քարոզներ ժողովրդի ընթերցանութեան համար», Էմ. ք. Նազարեանի 3 տետրակ.—5
«Քռիլովի առակները», Գ. արք. Այվազեանի 80 կ.
«Հայաստ. առաքել. ուղղափառ սբ. եկեղեցին եւ իր սրբ. կարգ», Ար. Տէր-Միքայէլեանի—60
«Մխիթար Գօշի դատաստանագիրք հայոց», իրաւաբանական հետազօտութիւններով, Վ. վ
Բաստամեանցի—3 ր.
«Խորենացու պատմութիւն», ուսումնասիրութիւն, Գ. Տէր-Մկրտչեանի—35 կ.
«Դատաստարակութիւն եւ ժառանգութիւն», թարգմ. Ս. Մ.—60 կ.
«Թէ ինչ է իատերիկան», թարգմ. Նազիկեանի—40 կ.
«Կինն իբրեւ օրիորդ», թարգմ. Նազիկեանի—1 ր. 20 կ.
«Ցեց Ուիդայի», վէպ, թարգմ. Մատինեանի—80 կ.
«Մի մանկական հոգու պատմութիւն», վէպիկ, թարգմ. Տ. Վ.—1 ր.
«Կրքերը եւ նոցա ազդեցութիւնը առողջութեան վրա», Ա. Բաբայեանի—30 կ.
«Տարերք ազգաբնակութեան», Ի. Յարութիւնեանի (թարգմ.)—50 կ.
«Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքայ Գորեա եւ Շմոնի վկայից, որ վկայ
յՈւռհա, Գ. Տէր-Մկրտչեանի—50 կ.
«Նկարագրութիւն հոգեւորական վարուց Յովսաբու որդւոյ թագաւորին հնդկաց, աշխատ.
վարդ Տէր-Մովսէսեանի—70 կ.
«Ս. Լուսաւորչի աջը», Կ. Կոստանեանցի—15 կ.
«Տէր-Պետրոս Գետադարձ», Կ. Կոստանեանցի—10 կ.
«Պարթեւները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները հայոց հետ», Ն. Քարամեանի—1

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустяну, Лорисъ-Мековская ул. № 11. 1—3

ՊԱՏԱՀՄԱՄԲ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Բանկի պարտքի հետ միասին, ձեռնտու պայմաններով, Բաթումի կենտրոնում տեղում, երկու ամենալաւ փողոցների անկիւնում, առեւտրական բանուկ տեղում, եր արդիւնաւէտ, հիմնաւոր շինած, քարեայ տներ,—մէկը եռայարկ, 22 սենեակներով եւ խանութներով, միւսը—երկայարկ, 26 սենեակներով, նկուղներով եւ բոլոր կարեւոր նուագքներով։—Ծախվում է նոյնպէս հիմնաւոր շինած քարեայ չոր ամբարանոց, 22 սենեակներով, երկու քարեայ կարեւոր շինութիւններով, գեղանկար եւ առողջ «Մախինջաուրի» մարանոցատեղում, որ գտնվում է ուղիղ Սեւ ծովի ափին, բարձրադիր տեղում, երկ թուղային երկու պլատֆորմների մէջտեղում, րէլսերի մօտ, 5 վերստ եւ երկաթուղով ¼ ժ ճանապարհ հեռու Բաթումից. Մանրամասնութիւններն իմանալու համար դիմել է. Ն. Սոկոլովսկուն—Բաթումում (Э. Н. Соколовскому въ Батумѣ). 1—1

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

Լ. ՏՕԼՍՏՕՑ.—«ՑԱՐՈՒԹԻՒՆ» (վէպ. արտատպած «Մուրճ» ամսագրից), թարգմ. Յովհաննիսեան, գ. 1 ր. 50 կ. (ճանապարհածախսով 1 ր. 75 կ.)։

ԱԼ. ԴՕԴԷ.—«ՓՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ եւ ՌԻՍԼԷՐ ԱԻԱԳ» (վէպ. արտատպած «Մուրճ» ամսագրից) թարգմ. Տ. Յովհաննիսեան. գ. 1 ր. (ճանապարհածախսով 1 ր. 25 կ.)։

ԼԵՐՄՕՆՏՕՎ. «Դ Ե Ի». թարգմ. Յ. Միրզայեանց. գ. 10 կ. (ճանապարհածախսով 20 կ.)

Դիմել Տիգրան Յովհաննիսեանին՝ Тифлисъ, Вельяминовская ул., д. 3, присяжному повѣренному Тиграну Нерс. Іоаннисянцъ.

ԿԱՐՍՈՒՄ

Ալէքսանդրովսկայա փողոցի վրա, 1902 թուականի յունվարի 25-ից

բացվում է „ԵՒՐՕՊԱ“ հիւրանոց

Բոլոր յարմարութիւններով։ Համարների գինը՝ օրական 70 կոպէկից սկսած մինչեւ 3 ռուբլ

5—5 Հիւրանոցատէր՝ ՄԿՐՏԻՉ ՔԱՑԱԽԵԱՆ

արտասահման գնալու պատճառով

ԾԱԽՎՈՒՄ Է ՏՈՒՆ

Դիդուբէ, Անդրեեվսկի եւ Շերեմետեւսկի փողոցների անկիւնում, ամենայարմար տեղում մինչեւ կան խմիչքի պարզով եւ խանութ. հարցնել տանտիրոջը։

(ու. կ. ե. հ. կ. ե.) 6—6

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

XVIII ԴԱՐ

Հաջին մաս

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ

Ծախվում է. 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшакъ“. 2) «Մուրճ» ամսագրի խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Муръчъ.“ 3) «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 ռուբլի 50 կոպէկ։

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան Կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՕԽՈՒՄԻ, Կարամէլ «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։

19—100 (հ. կ.)

Дозволено Цензурою, Тифлисъ, 8 Февраля 1902 г. Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.